Հավելված 1

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ 2025 ԹԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղը (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ կամ Մասնաճյուղ) որպես տարածաշրջանային դերակատարության կրթական և գիտամշակութային հաստատություն իր առաքելության շրջանակներում իրականացնում է աշխատաշուկայում պահանջված բակալավրական ու մագիստրոսական կրթական ծրագրեր՝ կիրառելով ուսուցման ժամանակակից եղանակներ և որակի ապահովման կառուցակարգեր և տարածաշրջանը համալրում է անհրաժեշտ մասնագետներով, նպաստում է մշակութային կյանքի զարգացմանը:

Հաշվետու ժամանակաշրջանում Մասնաճյուղն առաջնորդվել է ԵՊՀ ԻՄ զարգացման 2025-30թթ. գործողությունների պլանով և Մայր բուհի հատուկ աջակցությամբ ու իր ստորաբաժանումների միջոցով 2025թ. թվականին հետևողականորեն և նպատակային իրականացրել է համալսարանի և իր կողմից մատուցվող ծառայությունների արդիականացմանը, ենթակառուցվածքների տեխնիկական վերազինմանը, ուսումնական և աշխատանքային բարելավված միջավայրի ստեղծմանն ու ապահովմանը, կրթական ծրագրերի արդյունավետ իրականացմանը, գիտահետազոտական գործունեության ակտիվացմանը, կադրային համակարգի զարգացմանն ուղղված գործընթացներ:

Մասնաճյուղն իր ուսանողներին առաջարկում է համակողմանի գիտելիք, հետազոտական, ստեղծագործական կարողություններ և հմտություններ ապահովող կրթական ծրագրեր և ապահովում դրանց իրականացման համար անհրաժեշտ ժամանակակից ենթակառուցվածներ և բարենպաստ միջավայր:

Մասնաճյուղն իր դասախոսական կազմի համար ապահովում է արդյունավետ աշխատելու, զարգանալու, գիտություն ստեղծելու և իրացնելու, ուսանողներին կրթելու ու առաջնորդելու գիտակրթական արդյունավետ միջավայր:

Մասնաճյուղի գործունեության հիմնական նպատակն է անխափան և արդյունավետ կազմակերպել ուսումնական գործընթացը, կրթությունն իրականացնել բարձրակարգ դասախոսական կազմի ներգրավմամբ, մատուցել նորարարական ու առաջադեմ կրթություն, նաև նպաստել դիմորդների թվի աճին և իր շրջանավարտների ապագա կարիերայի ձևավորմանը, հետևողական լինել ուսումնառության գործընթացում հանդիպող խնդիրների և դրանց լուծման, կոնկրետ գործընթացների բարելավման և արդյունավետության բարձրացման նկատմամբ:

Իր գործունեության իրականացման, գործընթացների կառավարման և կանոնակարգման հարցերում ստորաբաժանումների հետ ակտիվ և արդյունավետ աշխատում են հանձնաժողովները, մասնավորապես գիտական խորհրդին կից Որակի կառավարման մշտական հանձնաժողովը, որը քննարկում և Գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացնում գրեթե բոլոր կանոնակարգային փաստաթղթերը:

Մասնաճյուղն իր աշխատանքի արդյունքները գնահատելու և հանրությանը ներկայացնելու համար յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին հրապարակում է իր Գործունեության արդյունքային ցուցանիշների (ԳԱՑ 2020-2025) լրակազմը, որոնց հիման վրա և բոլոր

ստորաբաժանումների 2025թ.-ի գործունեության հաշվետվությունների հիման վրա կազմվել է այս հաշվետվությունը:

1. Դիմորդների մասնագիտական կողմնորոշում և ընդունելություն

ԵՊՀ ԻՄ-ն տարածաշրջանում պահանջված բարձրագույն ուսումնական հաստատություն է և պետք է նշել, որ վերջին հինգ տարիներին ունենում է դիմորդների կայուն հոսք, ինչը պայմանավորված է նաև դպրոցներում մասնաճյուղի կողմից իրականացվող մասնագիտական կողմնորոշման լայնածավալ և բազմաբովանդակ աշխատանքներով: Ձեռքբերումների մասին խոսում են թվերը և դիմորդների հոսքը:

Նշենք, որ մասնաճյուղի դիմորդները հիմնականում Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների շրջանավարտներն են (2024թ. ընդունելության արդյունքներով այն կազմել է ընդհանուր դիմորդների **97.6%-ը**, նախորդ ուստարում՝ **96.3%-ը**), ինչն, ակնհայտ է, պայմանավորված է նրա մարզում տեղակայմամբ, նաև մարզի հասարակության շրջանում նրա ունեցած բարձր հեղինակությամբ և վարկանիշով: Եվ պետք է փաստել, որ մասնաճյուղը պատվով է կատարում իրեն վերագրված դերը սահմանամերձ Տավուշում՝ նպաստելով նրա գիտական, մշակութային և սոցիալ-տնտեսական առաջընթացին:

Մասնաճյուղի Պրակտիկաների կազմակերպման և շահակիցների հետ համագործակցության (ՊԿՇՀ) բաժինը Տավուշի մարզի դպրոցներում իրականացրել է դիմորդների հավաքագրմանն ու մասնագիտական կողմնորոշման ուղղված մի շարք աշխատանքներ, որոնք ներառում են հանդիպումներ և առարկայական դասախոսություններ դպրոցներում, աշակերտների այցեր Մասնաճյուղ, ինտելեկտուալ խաղեր, մրցույթներ, առարկայական օլիմպիադաներ և այլ գովազդային միջոցառումներ:

Տավուշի մարզի 12 հանրակրթական դպրոցների 11-րդ և 12-րդ դասարանի աշակերտների հետ կազմակերպվել են **հանդիպումներ**, որի ընթացքում ներկայացվել են ԵՊՀ ԻՄ մասնագիտություններն ու կրթական ծրագրերը, տրվել է մասնագիտական խորհրդատվություն, քննարկվել են Մասնաճյուղի մրցակցային առավելություններն ու հնարավորությունները:

Մասնագիտական ամբիոնների հետ համագործակցությամբ Իջևանի, Դիլիջանի և Բերդի **12 դպրոցներում** կազմակերպվել են **31 դասախոսություններ** «Հայոց լեզու», «Մաթեմատիկա», «Ֆիզիկա», «Անգլերեն», «Հայոց պատմություն», «Արվեստ» և «Ռուսաց լեզու» առարկաների շրջանակներում: Դասախոսությունների համար ընտրվել են ծրագրային և արդիական, դպրոցականների համար հետաքրքրություն ու մոտիվացիա առաջացնող մի շարք թեմաներ՝ նպատակ ունենալով լրացնելու և ընդլայնելու աշակերտների ունեցած գիտելիքները: Դասախոսությունների որոշ մասն էլ իրականացվել է՝ կարևորելով դպրոցների կողմից նախապես առաջարկված թեմաները:

ՊԿՇՀ բաժինը մարզի հանրակրթական դպրոցների հետ համագործակցությամբ կազմակերպել է **19 ճանաչողական այց** 6-12-րդ դասարանների **328 աշակերտների մասնակցությամբ**: Ճանաչողական այցերի մասնակիցների շրջանակն ընդլայնելու համար մասնաճյուղի պաշտոնական կայքէջի «Դիմորդների հետ տարվող աշխատանքներ» բաժնի միջոցով առաջին անգամ կիրառվել է **առցանց հայտադիմումների** լրացման եղանակը, որին արձագանքել է մարզի 15 դպրոց:

ՊԿԾՀ բաժինն իր աշխատանքները կազմակերպել է ֆակուլտետների հետ ակտիվ համագործակցությամբ, հստակ մշակված ժամանակացույցով, որում հաշվի է առնվել նաև ԵՊՀ նախաձեռնությամբ մասնաճյուղում բացված «Ուսանողների դերը ուշխորհրդային Հայաստանի լիբերալ մշակույթում» խորագրով ժամանակավոր ցուցադրությունը: Այցերի ընթացքում մասնակիցները ծանոթացել են մասնաճյուղի կառուցվածքին, ֆակուլտետների հնարավորություններին, առանձնահատկություններին, կրթական ծրագրերին, հանդիպումներ ունեցել դեկանների, ամբիոնի վարիչների և կրթական ծրագրերի ղեկավարների հետ, քննարկել կրթական ծրագրերի առանձնահատկությունները, աշխատաշուկայի պահանջները, մասնաճյուղի շրջանավարտների հնարավորությունները, մասնակցել նախընտրած դասընթացներին:

Իջևանի Պ.Տէվէճեանի անվան տարածաշրջանային քոլեջի «լավ» և «գերազանց» գնահատականներով շրջանավարտներին տեղեկատվություն է տրվել մասնաճյուղի հեռակա ուսուցմամբ երկրորդ կուրսում նախընտրած մասնագիտությամբ ուսումը շարունակելու ընթացակարգի վերաբերյալ:

Մասնաճյուղի գովազդման և դիմորդների մասնագիտական կողմնորոշման մեջ իրենց կարևոր տեղն ունեն Մայր բուհի նախաձեռնությամբ մարզերում անցկացվող **առարկայական օլիմպիադները:** «ԵՊՀ օլիմպիադա-2025»-ի շրջանակներում Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններից օլիմպիադային մասնակցության հայտ է ներկայացրել 25 դպրոցի 12-րդ դասարանի **177 աշակերտ**, որոնցից 9 առարկաներից 2-րդ փուլ է անցել **45 աշակերտ** (մասնակիցների գրեթե 25%-ը): Երևանի պետական համալսարանում կազմակերպված II փուլի արդյունքներով **3 աշակերտ** արժանացել է **I կարգի դիպլոմի** («Աշխարհագրություն», «Հայոց լեզու և գրականություն», «Քիմիա» առարկաներից), 3 աշակերտ՝ **II կարգի դիպլոմի** («Հայոց լեզու և գրականություն», «Ռուսաց լեզու», «Գերմաներեն» առարկաներից), 2 աշակերտ **գովասանագրի**՝ «Ռուսաց լեզու», «Ֆրանսերեն» առարկաներից:

Հաշվետու ժամանակահատվածում ՊԿԾՀ բաժնի և Ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ հանրակրթական 4 դպրոցներում (Այգեհովիտի, Ազատամուտի միջն. դպրոցների աշակերտների համար կազմակերպվել են, Սևքարի և Հաղարծնի միջն. դպրոցների աշակերտների համար կազմակերպվում են) կազմակերպել է **«Ամենախելացին» ինտելեկտուալ խաղը**, որին մասնակցելու հայտ են ներկայացրել 10-11-րդ դասարանների **48 աշակերտ:** Խաղերում հաղթողները պարգևատրվել են մեդալներով, պատվոգրերով և նվերներով:

2025-2026 ուստարվա բակալավրի առկա ուսուցման ընդունելության արդյունքներով մասնաճյուղն ունեցել է առաջին հայտով **265** դիմորդ, լրացուցիչ (թափուր) փուլով՝ **7 դիմորդ**, հեռակա ուսուցման ընդունելության արդյունքներով՝ **107** դիմորդ: Ընդունելության մրցույթի արդյունքներով անվճար ուսուցման համակարգ ընդունվել է **45 դիմորդ** (զբաղեցվել են պլանանային բոլոր տեղերը), առաջին հայտով վճարովի ուսուցման համակարգ ընդունվել է **147 դ**իմորդ, արդյունքում ընդունելության քննությունները հաղթահարել է դիմորդների **72.4%-ը**, որը մարզային բուհի համար վատ ցուցանիշ չէ:

2025-26 ուստարվա բակալավրի հեռակա ուսուցման ընդունելության մրցույթի արդյունքներով ընդունվել է **29 դիմորդ** (ընդհանուր դիմորդների 27.1%-ը, որն ավելի բարձր է քան նախորդ տարվա ցուցանիշը՝ 22.5%):

Մագիստրոսական 2 կրթական ծրագրերով 2025-2026 ուստարում մասնաճյուղ է դիմել 42 դիմորդ, որոնցից 38-ն ընդունվել է (դիմորդների **90.4%-ը**)։

Ընդունելության բավականին բարձր ցուցանիշ է գրանցվել «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» կրթական ծրագրում, որտեղ պետպատվերի տեղերի մրցութային շեմը եղել է 31.5 միավոր, վճարովի տեղերի համար՝ 17, դրական միավորներ հավաքած 5 դիմորդ չի հաղթահարել մրցութային շեմը։

2025-26 ուստարում ՄՄՈՒՀ-երի բարձր առաջադիմությամբ 33 շրջանավարտ դիմել է մասնաճյուղ համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելու համար, նրանցից ընդունվել է 18-ը։

Վերջին 3 տարիների համար առկա ուսուցման դիմորդների թիվը մասնաճյուղի բոլոր ֆակուլտետների համար ընդհանուր առմամբ կայուն է։

Հասարակությանը Մասնաճյուղում գործող մասնագիտությունների, իրականացվող կրթական ծրագրերի և ընդունելությանն առնչվող տարբեր հարցերի վերաբերյալ լիարժեք և ամփոփ տեղեկատվություն է տրամադրում մասնաճյուղի պաշտոնական կայքը։ Այցելությունների ժամանակ դպրոցներին տրամադրվում են Մասնաճյուղը և նրանում առկա մասնագիտությունները գովազդող բուկլետներ։

Ընդունելության ցուցանիշների բարելավման, դիմորդների թվի ավելացման համար Մասնաճյուղը պարբերաբար վերանայում է իր մոտեցումները, գնահատում է այդ գործընթացում ունեցած հաջողությունները, դիտարկում խնդիրները։ Նոր ուսումնական տարվա համար մասնաճյուղը նախատեսում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

- Ավելացնել հանրակրթական դպրոցներում կազմակերպվող դասախոսությունների թիվը՝ ներառելով դասախոսություններ բոլոր քննական առարկաներից,
- Համագործակցելով դպրոցների հետ ավելացնել ճանաչողական այցերի թիվը՝ ընդգրկելով մարզի ավելի շատ դպրոցներ,
- Իջևանի տարածաշրջանի հանրակրթական դպրոցներում կազմակերպել դիմորդների գիտելիքների ստուգում և թեստերի հետ աշխատելու խորհրդատվություն, կազմակերպել առարկայական մրցույթներ,
- Դիմորդների համար կազմակերպել նախապատրաստական դասընթացներ։

2. Կրթական ծրագրեր

Մասնաճյուղն իր 4 ֆակուլտետներում 2024-25 ուստարում կրթություն է իրականացրել **բակալավրի 12 առկա** («Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» (ԻԿՄ), «Ֆինանսներ (ըստ ոլորտի)», «Զբոսաշրջություն», «Պատմություն», «Հայոց լեզու և գրականություն» (ՀԼԳ), «Անգլերեն լեզու և գրականություն» (ԱԼԳ), «Ֆրանսերեն լեզու և գրականություն» (ՖԼԳ), «Ռուսաց լեզու և գրականություն» (ՌԼԳ), «Հոգեբանություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» (ՏՄՄ), «Դիզայն», «Դեկորատիվ-կիրառական արվեստ» (ԴԿԱ)), **6 հեռակա** («Ֆինանսներ (ըստ ոլորտի)», «Զբոսաշրջություն», «Պատմություն», «Հայոց լեզու և գրականություն», «Հոգեբանություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա») և **2 հեռակա մագիստրոսական** («Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» (ԴՄՄ), «Գործարար վարչարարություն (կառավարում)» (ԳՎ)) **<u>կրթական ծրագրերով</u>**, որոնց մեծ մասը թողարկում է մարզի աշխատաշուկայում պահանջված

մասնագիտությամբ շրջանավարտներ, ընդորում մասնաճյուղը մշտապես իրականացնում է աշխատաշուկայում պահանջվող մասնագիտությունների ուսումնասիրություն, կրթական ծրագրերի մոնիթորինգ և պարբերաբար վերանայում իր կրթական ծրագրերի ցանկը: Այդ ուսումնասիրությունների արդյունքում է, որ վերջին տարիներին ներդրվել և հաջողությամբ իրականացվում են բակալավրի 4 կրթական ծրագրեր (Հոգեբանություն, ՏՄՄ, ՌԼԳ, ԴԿԱ) և մագիստրոսի 1 ծրագիր («Գործարար վարչարարություն (կառավարում)»): Նշենք, որ «Գործարար վարչարարություն (կառավարում)» մագիստրոսական ծրագիրը ներդրվել է 2023-2024 ուստարվանից՝ նկատի ունենալով մարզում համապատասխան կադրերի պակասը, ընդորում նկատվում է այդ ծրագրով դիմորդների թվի աճ. 2025թ.-ին ծրագիրն ունեցել է 17 դիմորդ նախորդ տարվա 9-ի դիմաց:

Մասնաճյուղի կրթական բարեփոխումների և որակի ապահովման բաժինը (նախկինում՝ մասնագիտական կրթության որակի ապահովման բաժինը) պարբերաբար իրականացնում է ՀՀ և Տավուշի մարզի աշխատաշուկայի ուսումնասիրություն՝ զարգացման միտումները և նոր կրթական ծրագրեր ներդնելու հնարավորությունները գնահատելու համար: Բաժինը 2025թ.-ի մարտին նույնպես իրականացրել է հերթական ուսումնասիրություն՝ դիտարկելով աշխատաշուկայում ամենապահանջված մասնագիտությունները, մարզում առկա թափուր հաստիքները, նաև նեղ մասնագիտական ոլորտները և այլն:

Ըստ ուսումնասիրության արդյունքների մարզերում, Տավուշի մարզում նույնպես, ամենապահանջվածը բանկային և վարկային ոլորտն է՝ մասնաճյուղերի իրենց ամենամեծ ցանցերով, հետևաբար ամենամեծ պահանջարկը վերագրվում է հենց բանկային և վարկային մասնագետներին և այստեղ մասնաճյուղն իրականացնում է բակալավրիական առակ և հեռակա «Ֆինանսներ» կրթական ծրագիրը:

Տավուշի մարզի աշխատաշուկայի վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ աշխատաշուկայի պահանջարկը հիմնականում կապված է գյուղատնտեսության, զբոսաշրջության և ծառայությունների ոլորտների աճի հետ, մարզի աշխատաշուկան պահանջում է հիմնականում **տեխնիկական, ֆինանսական, գյուղատնտեսական և զբոսաշրջային** բարձրակարգ մասնագետներ, որոնցից 3 ոլորտները մասնաճյուղը կարողանում է ապահովել համապատասխան մասնագետներով: Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներ են տարվում բնական գիտությունների ֆակուլտետում նոր «Արհեստական բանականության համակարգեր» բակալավրի կրթական ծրագրի ներդրման ուղղությամբ: Նշենք, որ «Միկրոչիպ» ընկերության և մարզի SS ոլորտի կազմակերպությունների հետ համագործակցության արդյունքում 2025թ.-ին վերանայվել է «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագիրը և ներառվել են տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ժամանակակից միտումներին համահունչ մի քանի դասընթացներ, ինչպիսիք են օրինակ՝ Տեխնիկական համակարգերի ավտոմատացված կառավարման հիմունքներ, Prompt ճարտարագիտություն, Տվյալագիտություն և ML, Կրիպտոգրաֆիայի մաթեմատիկական մեթոդներ և Block Chain, Linux և DevOPS (Git and Packaging), ավելացվել են մասնագիտական դասընթացների գործնական ժամերը:

3. Ուսանողների հաջողությունները

Մասնաճյուղի ռազմավարության հիմնաքարն իր **<u>ուսանողների համար</u>** բարձրորակ և մատչելի կրթության ապահովումն է: 2024-25 ուստարում մասնաճյուղում սովորել է **1096** ուսանող

(01.04.2025թ.-ի դրությամբ), այդ թվում առկա ուսուցմամբ՝ **619-ը**, որը կազմում է ուսանողական համակազմի **56.5%-ը**, հեռակա ուսուցմամբ բակալավրիատում՝ **443-ը** (**40.4%-ը**), մագիստրատուրայում՝ **34**: 2025-26 ուստարվա դեկտեմբերի 1-ի դրությամբ Մասնաճյուղում սովորում է **1092** ուսանող, այդ թվում առկա ուսուցմամբ՝ **641**, որը կազմում է ուսանողական համակազմի **58.7%-ը** (այս ցուցանիշը բարձր է նախորդ տարվա ցուցանիշից), հեռակա ուսուցմամբ բակալավրիատում՝ **389-ը** (35.62%-ը), մագիստրատուրայում՝ **62-ը**:

2024-2025 ուստարում մասնաճյուղում գրանցված առաջադիմության միջին տարեկան ցուցանիշը առկա ուսուցման համար կազմել է **58.8%,** (նախորդ ուստարում՝ 72%), հեռակա ուսուցմամբ բակալավրիատում՝ **27.6%,** մագիստրատուրայում՝ **94.9%**: Առկա ուսուցման ուսանողների առաջադիմության ցուցանիշները ֆակուլտետներում հետևյալն է. հումանիտար գիտությունների ֆակուլտետ՝ **72.1%** (նախորդ ուստարում՝ 86.9%), տնտեսագիտության ֆակուլտետ՝ **41.5%** (նախորդ ուստարում՝ 68.2%), բնական գիտությունների ֆակուլտետ՝ **55.7%** (նախորդ ուստարում՝ 43.75%), կիրառական արվեստի ֆակուլտետ՝ **66%** (նախորդ ուստարում՝ 89.3%):

Ընդհանուր առմամբ առաջադիմության ցուցանիշներն այս ուստարվա համար նվազել են բոլոր ֆակուլտետներում, իսկ բնական գիտությունների ֆակուլտետում նախորդ տարվա համեմատ առաջադիմության աճ է գրանցվել : Բնական գիտությունների ֆակուլտետի համար ստեղծվում են կրթական, ուսումնական, տեխնիկական անհրաժեշտ պայմաններ, կրթական ծրագրով նրանց հնարավորություն է տրվել ընտրել 3 մասնագիտացումներից մեկը՝ ծրագրավորում, ռոբոտաշինություն և թվային անվտանգություն, որոնց ապահովման համար վերջին 3 տարվա ընթացքում բացվել են 2 մասնագիտական լաբորատորիա և թվային անվտանգության կենտրոն, վերազինվել են համակարգչային սրահները:

Ուսման առաջադիմության հարցում մասնաճյուղն առավել ընդգծված խնդիր ունի հեռակա ուսուցման համակարգում, որի ցուցանիշները շատ ցածր են բոլոր կրթական ծրագրերի համար և այստեղ իրենց ազդեցությունն ունեն մեծաթիվ բացակայությունները՝ պայմանավորված ուսանողների մեծ մասի աշխատանքային զբաղվածությամբ, բազային գիտելիքների ցածր մակարդակը և այլ օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառները:

2025թ.-ին մասնաճյուղի բակալավրիատի **243** շրջանավարտներից **44-ը** (18%) մասնաճյուղն ավարտել է գերազանցության դիպլոմով, որը նույնպես նախորդ տարիների համեմատ (23%, 16%, 18%, 18%) բարձր ցուցանիշ է:

2025թ.-ին մասնաճյուղը մագիստրատուրայում ունեցել է **28** շրջանավարտ (2 կրթական ծրագրերից), որից **12-ը** (43%) ավարտել են գերազանց առաջադիմությամբ:

Այս թվերը վկայում են ուսման մեջ ուսանողների ձեռքբերումների, ակտիվության և նպատակադրվածության մասին: Ապահովվել է ուսման լավ առաջադիմություն և այդ հաջողության մեջ իրենց կարևոր ու խթանիչ տեղն ունեն մասնաճյուղում ներդրված և հետևողականորեն իրականացվող գործընթացները. դասավանդման ժամանակակից մեթոդներով դասավանդում, արդյունավետ իրականացվող պրակտիկաներ, գրավիչ և պարբերաբար բարելավվող կրթական ծրագրեր և այլն:

Առաջադիմության ցուցանիշի բարելավման հարցում պետք է կարևորել նաև ուսանողների մոտիվացիայի բարձրացումը և ուրախությամբ արձանագրել մեր ուսանողների և՛ կրթական, և՛ մասնագիտական, և՛ պրակտիկ այլ ձեռքբերումները։

Առանձնահատուկ պետք է նշել կիրառական արվեստի ֆակուլտետի ուսանողների ակտիվ մասնագիտական գործունեությունը։ Նրանք մասնակցում են տարբեր ցուցահանդեսների՝ ներկայացնելով իրենց մասնագիտական բարձր որակները և ճաշակը։

2025թ.-ի մարտին Իջևանի «Վերնատուն» պատկերասրահում ցուցադրվել են կիրառական արվեստի ֆակուլտետի ուսանողների (նաև դասախոսների) աշխատանքները՝ նվիրված կանանց տոնին։ Ցուցահանդեսն ընդգրկել է տարբեր ժանրերի (գեղանկարչություն, բնապատկերներ, նատյուրմորտներ, մանրանկարչություն, գրաֆիկա, բատիկա, քանդակ, գոբելեն, գրաֆիկական աշխատանքներ և այլն) ավելի քան 70 աշխատանք։

2025թ.-ի մայիսին «Քաղաքացիական երիտասարդական կենտրոն» ՀԿ-ի հրավերով ֆակուլտետի ուսանողները մասնակցել են Աղստև գետի մաքրության պահպանման և բնության հանդեպ պատասխանատվության խորացման նպատակով կազմակերպված բացօթյա նկարչական միջոցառմանը՝ պատկերելով Աղստև գետի աղտոտման ռիսկերն ու մաքրության պահպանման կարևորությունը։

Ավանդույթի համաձայն 2025թ.-ի հուլիսին նույնպես ֆակուլտետի շրջանավարտների աշխատանքները ցուցադրվել են շրջանավարտների դիպլոմների հանձնման հանդիսավոր արարողության ժամանակ։

ԵՊՀ ռեկտորի և պրոռեկտոր Մ. Հովհաննիսյանի աջակցությամբ և մասնակցությամբ հնարավորություն եղավ ֆակուլտետի դասախոսների և ուսանողների աշխատանքները ցուցադրելու Ամերիկայում։

2025թ. սեպտեմբերի 16-ին Երևանի պետական համալսարանում կայացած «ԲանՈՒԳործ. ԵՊՀ էքսպո-2025» միջոցառմանը մասնաճյուղը մասնակցեց առանձին տաղավարով՝ ցուցադրելով իր կրթագիտական հնարավորությունները և կիրառական արվեստի ֆակուլտետի դասախոսների, ուսանողների և շրջանավարտների բազմաժանր աշխատանքները։

Հպարտություն է, երբ մասնաճյուղի ուսանողները և շրջանավարտներն իրենց ներդրումն են ունենում մասնաճյուղի զարգացման գործում։

2025թ.-ին կյանքի է կոչվել մասնաճյուղի կենտրոնական մասնաշենքի բակի բարեկարգման նախագիծը, որը մշակվել է «Դիզայն» կրթական ծրագրի ուսանող Շ.Խաչատրյանի կողմից։ Մասնաճյուղի վերանորոգման աշխատանքների շրջանակներում իրականացվելու է բնական գիտությունների և կիրառական արվեստի ֆակուլտետների ինտերիերների ձևավորումներ, որոնց համար հիմք են ընդունվել «Դիզայն» 4-րդ կուրսի ուսանողների իրականացրած ինքնուրույն աշխատանքները։

Նախատեսվում է կյանքի կոչել նաև ֆակուլտետի երկու շրջանավարտների ավարտական աշխատանքները։ Դրանք ԵՊՀ ԻՄ մարզասրահի և դասախոսների հյուրատան դիզայնին վերաբերող նախագծեր են։

Հանրային հեռուստաընկերության «Առավոտ լուսո» հաղորդաշարը վերջին 2 տարիների ընթացքում պարբերաբար անդրադառնում է մասնաճյուղի կիրառական արվեստի ֆակուլտետի դասախոսների և ուսանողների մասնագիտական ակտիվ գործունեությանն ու ձեռքբերումներին։

Հաշվետու ժամանակահատվածում հաղորդաշարի կողմից լուսաբանվել է ֆակուլտետի երկու շնորհալի ուսանողների գործունեությունը։

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի երիտասարդ հետազոտողներ, «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրի ավարտական կուրսի երկու ուսանողուհիներ մասնակցել են ռուսաց լեզվի ուսուցիչների ամերիկյան խորհրդի 50-ամյակին նվիրված «Ռուսերենի՝ որպես երկրորդ և ժառանգական լեզվի դասավանդումը և ուսումնասիրությունը բազմազան և փոփոխվող աշխարհում» խորագրով միջազգային համաժողովին և աշխարհի խոշորագույն համալսարանների հայտնի գիտնականների հետ մեկտեղ հանդես եկել զեկուցումներով։

«Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի Մարիամ Դարբինյանը արժանացել է ԳՄՌԿ-ի սահմանած «2025 թվականի լավագույն ուսանող» մրցանակին։

2025թ.-ի հոկտեմբերին բնական գիտությունների ֆակուլտետի 4 ուսանող դասախոս Լ.Ծատուրյանի ղեկավարությամբ մասնակցել են Sinergy կենտրոնում կայացած JS և արհեստական բանականության խնդիրներին նվիրված միջազգային սեմինարին։

Էրազմուս+ միջազգային կրեդիտային փոխանակման ծրագրի շրջանակներում ԵՊՀ ԻՄ «Ֆրանսերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի 3 ուսանողներ 2024-25 ուստարվա 2-րդ կիսամյակում սովորել են Եվրոպական տարբեր բուհերում՝ Ֆրանսիայի Պոլ Վալերի Մոնպելիեի, Վենետիկի Կա Ֆոսկարի և Լեհաստանի Լորսի համալսարաններում։

Ուսանողների ակտիվ գործունեության մեջ և հաջողություններում իրենց կարևոր դերակատարումն ունեն իրականացվող մասնագիտական պրակտիկաները։ Վերջին տարիներին պրակտիկաաների նպատակային և արդյունավետ իրականացման համար մասնաճյուղն ընդլայնել է պետական և ոչ պետական տարբեր կազմակերպությունների, հիմնարկ-ձեռնարկությունների շրջանակը՝ կնքելով նրանց հետ համագործակցության հուշագրեր, պայմանագրեր։ Հաշվետու ժամանակահատվածում պրակտիկաների իրականացման համար մասնաճյուղն ունեցել է կնքված 15 հուշագիր և 32 պայմանագիր, որոնցից 4 պայմանագիր կնքվել է 2024-25 ուստարվա ընթացքում։

2024-25 ուստարում բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների համար կազմակերպվել է **49 պրակտիկա,** որից **9 ուսումնական** (5-ը՝ առկա ուսուցման, 4-ը՝ հեռակա ուսուցման համար), **12 մանկավարժական** (8-ը՝ առկա, 4-ը՝ հեռակա), **28 մասնագիտական** (18-ը՝ առկա, 10-ը՝ հեռակա)։

«Պատմություն» կրթական ծրագրի ուսանողներն ուսումնական պրակտիկայի շրջանակներում ուսումնասիրել են ՀՀ մարզերի և Արցախի Հանրապետության հնագիտական և պատմամշակութային հուշարձանները, ծանոթացել դրանց առանձնահատկություններին։

Զբոսաշրջություն» կրթական ծրագրի ուսանողներն ուսումնական պրակտիկայի շրջանակներում ուսումնասիրել են Հայաստանի զբոսաշրջային ռեսուրսները, դեստինացիաները և երկրի զբոսաշրջային ենթակառուցվածքները, ծանոթացել են Հայաստանի զբոսաշրջային ուղղություններին, վերլուծել տարբեր բնակավայրերի զբոսաշրջային ներուժը, այցելել են Հայաստանի կարևոր զբոսաշրջային օբյեկտներ, կատարել երթուղու կանգառների զբոսաշրջային գրավչության գնահատում։

«Դիզայն» կրթական ծրագրի ուսանողներն ուսումնական պրակտիկաների ընթացքում ուսումնասիրել են ապակենկարչությունը, նրա տիպերն ու տեսակները, կիրառվող նյութերը, միմյանց միքսելու մեթոդները, կատարել են դեկորատիվ բնապատկերների պարզ և բարդ

կոմպոզիցիոն լուծումներով ստեղծագործական աշխատանքներ: Պրակտիկայի ընթացքում ձևավորել են բրենդի խնդիրներին իրական լուծումներ տալու հմտություններ, վերլուծել տվյալ բրենդի առջև դրված խնդիրները և զբաղեցրած դիրքը շուկայում, կատարել են պրակտիկ աշխատանքներ:

«Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրի ուսանողներն ուսումնական պրակտիկայի ընթացքում ուսումնասիրել են խեցեգործությունը, աշխատել են իրենց կողմից մշակված էսքիզների վրա՝ ստեղծելով խեցեգործական առարկաներ: Աշխատանքային գործընթացը ներառել է ստեղծված խեցեգործական առարկաների առաջին թրծում, գունազարդում և երկրորդ թրծում, որով ապահովվել է ստեղծված խեցեգործական առարկաների ամրությունը և վերջնական արդյունքը:

Մանկավարժական պրակտիկային մասնակցել են հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» և «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրերի շուրջ 93 ուսանողներ (առկա և հեռակա ուսուցմամբ): Պրակտիկաներն իրականացվել են խմբային ձևաչափով՝ մասնաճյուղի հետ պայմանագիր ունեցող 4 դպրոցներում: Պրակտիկանտ-ուսանողները մասնակցել են դասերին, վարել փորձնական և հիմնական դասաժամեր, մշակել դասապլաններ, իրականացրել գնահատում, իրենց կատարած աշխատանքներն ամփոփել են թղթապանակներում, նրանք նաև մասնակցել են դպրոցական միջոցառումների կազմակերպման աշխատանքներին: Դպրոցի ուսուցիչները որպես մասնաճյուղի ուսանողների առավելություններ նշել են նորարարություններին նրանց ծանոթ լինելը և նոր մեթոդների կիրառումը, տեղեկատվական տեխնոլոգիաներին տիրապետելը, բարձր գիտելիքները, պարտաճանաչությունը, ձգտումը, աշակերտի ուշադրությունը կառավարելու և գործընթացին ներգրավելու կարողությունը և այլն (պրակտիկանտներից ուսուցիչների բավարարվածության միջին գնահատականը՝ 4.7):

Մասնագիտական պրակտիկաները կազմակերպվել են բակալավրի և մագիստրատուրայի բոլոր կրթական ծրագրերի բարձր կուրսերի ուսանողների համար: Պրակտիկային մասնակցել է **339 ուսանող**:

Պրակտիկայի ընթացքում ուսանողներին տրամադրվել է համապատասխան մասնագիտական միջավայր, հնարավորություններ՝ գործնականում կիրառելու իրենց գիտելիքները, զարգացնելու մասնագիտական կարողությունները:

Որպես մասնագիտական պրակտիկանների իրականացման վայրեր ընտրվել են կրթական ծրագրերի ուղղվածությանը և ուսանողների հետագա մասնագիտական գործունեությանը համապատասխանող հիմնարկ-ձեռնարկություններն ու կազմակերպությունները: Այդ թվում.

1. «Հույսի կամուրջ» ՀԿ-ի Իջևանի, Դիլիջանի, Նոյեմբերյանի, Բերդի երեխայի զարգացման և ընտանիքի աջակցության կենտրոններ, դպրոցներ և մանկապարտեզներ («Հոգեբանություն» ԿԾ),
2. «Յելլ էքսթրիմ պարկ», «Իջևանի գինու և կոնյակի գործարան» ՓԲԸ և մի շարք հասարակական կազմակերպություններ (ԱԼԳ ԿԾ),
3. Գիտական հետազաոտութիւնների զարգացման կենտրոն, «ՅԵՍՈՖԹ» ՍՊԸ, «Էլթի Քոդինգ» ՍՊԸ, «Զուրաբյանս» ՍՊԸ, «Դիջիթեյն» ՍՊԸ (ԻԿՄ ԿԾ),
4. ՀՀ կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոն, «Արդշինբանկ»

ՓԲԸ, «Ֆասթ Բանկ», «Ակբա բանկ» և «Արարատբանկ» ԲԲԸ-ների մասնաճյուղեր, ՀՀ վիճակագրական կոմիտե, ՀՀ պետական եկամուտների կոմիտե, Տավուշի մարզպետարան, համայնքապետարաններ, Իջևանի և Դիլիջանի հաշվապահական հաշվառման գրասենյակներ, «Իջևանի գինու և կոնյակի գործարան» ՓԲԸ, տարբեր սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ, փակ բաժնետիրական ընկերություններ և այլն (Ֆինանսներ ԿԾ),

5. «Ապագա տուր» ՍՊԸ, «Իջևանի գինու և կոնյակի գործարան» ՓԲԸ, «Ագրոտրենդ» ՓԲԸ, Գետահովիտ ռեզորթ, Տուրիզմի զարգացման գործակալություն, տարբեր հյուրանոցներ, հոթելներ և հանգստյան գոտիներ (Զբոսաշրջություն ԿԾ),
6. «Վիքիմեդիա Հայաստան» գիտակրթական ՀԿ-ի հետ համագործակցությամբ (ԴԿԱ, Դիզայն, Պատմություն, ԱԼԳ, ՖԼԳ)։

Հաշվետու տարում առաջին անգամ պրակտիկաների կազմակերպման, հաշվետվողականության և գնահատման գործընթացները իրականացվել են **ԵՊՀ Մուղլ առցանց** հարթակում՝ նպաստելով ուսանողների ինքնուրույնության, կատարած աշխատանքների վերաբերյալ պատշաճ հաշվետվություններ կազմելու և իրենց ձեռքբերումները ֆիքսելու որակների ձևավորմանը։

Արտաքին շահակիցները բարձր են գնահատել մեր պրակտիկանտ-ուսանողների ստեղծագործականությունը, նախաձեռնողականությունը, քննադատական միտքը, նոր գիտելիքներ ձեռքբերելու ցանկությունը, հանդուրժողականությունը և այլն (բավարարվածության միջին գնահատականը՝ 4.8)։

Անդրադառնալով շրջանավարտների զբաղվածությանը, նշենք, որ մի քանի կրթական ծրագրերի համար այդ ցուցանիշը հուսադրող է, պայմանավորված է մարզի աշխատաշուկայում նրանց պահանջվածությամբ և յուրաքանչյուր նոր տարում գրանցվում են ավելացման միտումներ և բացվում են նոր հնարավորություններ։ Այդպիսի ծրագրերից է «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագիրը։ Նախ նշենք, որ այդ ծրագրի բարձր կուրսերի շատ ուսանողներ աշխատում են մարզում գործող ծրագրավորման ընկերություններում՝ «LT Coding» ՍՊԸ, «Զուրաբյանս» ՓԲԸ, «Էլմասիս» ՍՊԸ, «»Իջևանում թվային անվտանգության կրթական և արձագանքման կենտրոն, Միկրոչիպ, նաև աշխատում են մարզում գործող «Արմաթ» ինժեներական լաբորատորիաներում որպես խմբավարներ։

2025թ.-ի շրջանավարտների շրջանում անցկացրած հարցման արդյունքներով հարցման 125 մասնակիցների **36.8%-ը** (46 շրջանավարտ) նշել է, որ արդեն աշխատում է, որից **12%-ը**՝ մասնագիտությամբ, իսկ **24.8%-**ն արդեն կողմնորոշված է աշխատանքի հարցում։

Մյուս կրթական ծրագրերի շրջանավարտները հիմնականում աշխատում են դպրոցներում, բանկերում, հասարակական կազմակերպություններում, ցանցային սպասարկման ծառայություններում, զբոսաշրջային գործակալություններում, հյուրանոցային և ռեստորանային համալիրներում և այլն։

Զբաղվածության մեծ խնդիր ունեն հիմնականում հումանիտար ուղղվածությամբ կրթական ծրագրերի շրջանավարտները։

Նշենք, որ մասնաճյուղի շրջանավարտները բավականին պահանջված են մարզի աշխատաշուկայում (հայտնի տվյալներ կան, որ նաև մարզից դուրս)։ Իրենց աշխատավայրերում

նրանք իրենց դրսևորում են որպես գիտելիքներով հարուստ, բանիմաց, մասնագիտական կարողություններով ու նաև մարդկային բարձր որակներով աշխատակիցներ և գործընկերներ։ Դրա մասին են վկայում մասնաճյուղի ՊԿՇՀ բաժնի կողմից մարզի գործատուների շրջանում ամենամյա իրականացվող ուսումնասիրության արդյունքները։

Հերթական, 2025թ.-ի հարցման համար ընտրված մարզի 130 գործատու կազմակերպություններից (ներառյալ բանկերի, դպրոցների, հյուրատների, հասարակական կազմակերպությունների և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներ) հարցմանը մասնակցել են 68-ը (52.3%)։

Գործատուները գնահատել են վերջին հինգ տարվա ընթացքում աշխատանքի ընդունված և ԵՊՀ ԻՄ շրջանավարտ հանդիսացող 258 աշխատակցի գործունեություն, որոնցից 201-ը (77.90%-ը) աշխատում է իր մասնագիտությամբ, ինչը վկայում է, որ մեր շրջանավարտների մասնագիտական կարողություններն ու պատրաստվածությունը հիմնականում համապատասխանում են աշխատաշուկայի պահանջներին։

ԵՊՀ ԻՄ շրջանավարտների մասնագիտական պատրաստվածությունը 4 և 5 են գնահատել 68 գործատուներից 61-ը (89.70%-ը), գործնական հմտությունները՝ 59-ը (86.76%-ը), մասնագիտական գրագետ խոսքը՝ 58-ը (85.29%-ը)։

Իրենց կազմակերպությունում մասնաճյուղի հեղինակությունը բարձր (4 և 5) են գնահատել 68 գործատուներից 66-ը (97.05%-ը)։

Հարցման մասնակիցներից 67-ը (98.52%-ը) փաստում են, որ իրենց մերձավորներին և ընկերներին խորհուրդ կտան դիմել ԵՊՀ ԻՄ։ Այս ցուցանիշը բավականին բարձր է և խոսում է տարածաշրջանում մասնաճյուղի որպես բարձրորակ կրթություն տրամադրող կրթական հաստատության հեղինակության և բաձր վարկանիշի մասին։

4. Դասախոսական կազմ և գիտական գործունեություն

Մասնաճյուղի գիտական ու ուսումնական գործընթացի անխափան շարժիչ ուժը դա Մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմն է։

2025թ.-ին Մասնաճյուղում դասավանդում են 159 դասախոս, այդ թվում 13 պրոֆեսոր, 57 դոցենտ, 39 ասիստենտ և 50 դասախոս։ Մասնաճյուղն իր ուսումնակրթական գործընթացն իրականացնելու համար ներգրավել է հիմնական և համատեղությամբ աշխատող գիտությունների 6 դոկտորներ՝ պրոֆեսորի գիտական կոչումով, պրոֆեսորի գիտական կոչումով 5 գիտությունների թեկնածուներ և ընդհանուր առմամբ՝ գիտությունների 79 թեկնածուներ։

Ընթացիկ ուսումնական տարում ՌԴ քաղաքացի բանասիրական գիտությունների թեկնածու Ալեքսանդր Վիտալիի Պաշկովը ժամավճարային հիմունքով դասավանդում է Մասնաճյուղում՝ որպես հրավիրյալ պրոֆեսոր։

Նշենք, որ հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2 դասախոսներ ստացել են գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, 3-ը՝ դոցենտի գիտական կոչում, մեկ դասախոս ԵՊՀ-ում ձևակերպվել է որպես հայցորդ։

Տնտեսագիտության ֆակուլտետում դասավանդում են նաև ՀՀ ԿԲ Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի փորձառու աշխատակիցները։

Միայն 2025 թվականին ԵՊՀ ԻՄ-ի հիմնական դասախոսական կազմի (թվով 64 դասախոս)

կողմից հրապարակվել է **28 գիտական աշխատանք**, որոնք ընդգրկում են տնտեսագիտության, բնագիտության, բանասիրության և կրթության ոլորտները:

Դրանցից 1 հոդված հրապարակվել է Scopus/Q2-ում, 12 հոդված ՀՀ ԲՈԿ-ի կողմից երաշխավորված հանդեսներում, 3 զեկույց միջազգային գիտաժողովների ժողովածուներում, 12 աշխատանքներ ուսանողների հետ՝ միջազգային կոնֆերանսների ժողովածուներում: Նշենք որ, 2024–2025 ուսումնական տարվա ընթացքում Մասնաճյուղի դասախոսների կողմից կատարվել են **96 հրապարակումներ, որոնցից 40-ը՝** հիմնական դասախոսական կազմի կողմից:

Մասնաճյուղի Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ Գ.Միրոյանը և դոցենտ Ս.Խաչիկյանը էրազմուս+ ծրագրով մասնակցել են եվրոպական երկրներում կազմակերպված 4 կոնֆերանսների:

Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի վարիչ Ա.Հովակիմյանը մասնակցել է COMDATA 2025 միջազգային (2025թ. ապրիլ) և CICSAM 2025 (մարտ, ք. Երևան) կոնֆերանսներին:

Ներկայացված ցուցանիշներում հիմնական ակտիվությունը ֆակուլտետների համատեղությամբ աշխատող դասախոսական կազմինն է և դա վկայում է, որ հիմնական դասախոսական կազմն առանձնապես ակտիվություն չի ցուցաբերում, այս ուղղությամբ մասնաճյուղն ունի լուրջ խնդիրներ և անելիքներ:

Մասնաճյուղը չունի բազային և գիտահետազոտական ուժեղ հենք, անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսներ, հետևաբար գիտահետազոտական մտքի զարգացման և առաջընթացի համար մշտապես ակնկալում և ստանում է Մայր բուհի աջակցությունը:

Նշենք, որ վերջին տարիներին մասնաճյուղի դասախոսների գործունեությանը խթանում են նաև կազմակերպվող ներքին դրամաշնորհային ծրագրերը: 2024–2025 ուսումնական տարվա ներքին դրամաշնորհային մրցույթի արդյունքում հաղթող են ճանաչվել երկու նախագծեր (6 դասախոսի և 3 ուսանողների մասնակցությամբ).

1. «Ծրագրավորման առարկաների էլեկտրոնային գիտելիքի ստուգման համակարգ» թեմայով նախագիծ՝ 500 000 դրամ ֆինանսավորմամբ, որում ներառված են 3 դասախոս և 2 ուսանող: Դրամաշնորհի շրջանակներում մշակվել է էլեկտրոնային համակարգ «Ծրագրավորում 1, 2» և «Ծրագրավորման արդի լեզուներ» դասընթացների համար:

2. Կիրառական արվեստի ոլորտի նախագիծ՝ 750 000 դրամ ֆինանսավորմամբ: Դրամաշնորհի շրջանակներում իրականացվել է մասնաճյուղի ավարտական միջոցառման համար շրջանավարտների հագուստների ձևավորում և նախագծում: Մոդելավորվել և կարվել է 50 հատ հագուստ:

Հայտարարված է նաև նոր դրամաշնորհային մրցույթ, որի արդյունքները դեռևս ամփոփված չեն:

Կիրառական արվեստի ֆակուլտետն առանձնանում է իր բնույթով և ներկայանալու ձևերով: Այստեղ որպես ցուցանիշներ դիտարկվում են դասախոսական կազմի կողմից կազմակերպած ցուցահանդեսները, կամ մասնակցությունը հանրապետական և միջազգային ցուցահանդեսների: Եվ պետք է արձանագրել, որ ֆակուլտետի դասախոսական կազմը ցուցաբերում է բավականին ակտիվություն և աջակցում ու ներգրավում են նաև ուսանողներին՝ նրանց մեջ բարձրացնելով արվեստագետի ոգին ու նվիրվածությունն իր գործին:

1. 2025թ. փետրվարին Անուշ և Դոնարա Չիբուխչյանները Վյուրտաս թանգարանի և ցուցասրահների կենտրոնում մասնակցել են Նաիրիի ազգային ակադեմիայի 13-ամյակի և «Երկխոսություններ արվեստի մասին. զգացմունքների լեզվով» նկարների ցուցահանդեսի բացմանը: Ցուցահանդեսին ներկայացված են եղել դեկորատիվ-կիրառական արվեստի աշխատանքներ:

2. 2025թ.-ի հունիսին Իջևանի «Վերնատուն» պատկերասրահում կազմակերպվել է «Տուն իմ նախնյաց» նախագծի աշխատանքների ցուցադրություն, որը ներառել է մի շարք մշակութային վարպետաց դասեր, հանդիպումներ և ճանաչողական արշավներ: Վարպետաց դասերի զգալի մասն իրականացվել են ֆակուլտետի դասախոսների ջանքերով: Այն եզրափակվեց ավարտական ցուցադրությամբ, որի շրջանակում ներկայացվեցին տարբեր մարզերից մասնակցած երիտասարդների ստեղծագործությունները՝ գեղանկարներ, պատմական հագուստների վերարտադրություններ և թղթե կոլաժներ:

3. «Առավոտ լուսո» հաղորդաշարը պատրաստել է հաղորդումներ Անուշ և Դոնարա Չիբուխչյանների գործունեության մասին:

4. Առաջին ալիքի «Հայկական խեցեգործության ավանդները՝ նոր սերնդին» հաղորդումը նվիրված էր ֆակուլտետի դասախոս, խեցեգործ Աղասի Ղազարյանին, իսկ «5 րոպե Արվեստ» հաղորդումը՝ դասախոս, խեցեգործ Վահրամ Գալստյանի ստեղծագործություններին: Աղասի Ղազարյանի և հայկական խեցեգործության մասին հաղորդում է պատրաստել նաև միջազգային լրատվամիջոցը:

Դասախոսական կազմի **գիտահետազոտական գործունեության ակտիվացման**, որակի բարձրացման, գիտական հոդվածներ գրելու հմտությունների զարգացման, լավագույն գիտական փորձի փոխանակման համար մասնաճյուղի կրթական բարեփոխումների և որակի ապահովման բաժնի կողմից պարբերաբար կազմակերպվում են վերապատրաստման դասընթացներ:

2025թ.-ին կազմակերպվել է տարբեր ուղղվածություն և նպատակ հետապնդող վերապատրաստման **7 դասընթացներ**, որոնց թվում կարելի է առանձնացնել հետևյալ թեմաներով դասընթացները. «Գիտաչափական հոդվածների հրապարակման աշխուժացում», «Առաջատար գիտատեղեկատվական շտեմարաններ և դրանցում ընդգրկված ամսագրերում տպագրվելու ընթացքը և պահանջները», «Հայաստանի ազգային գրադարանի էլեկտրոնային շտեմարաններին ծանոթացում և գիտական գրականության օգտագործման հմտությունների բարելավում»:

Միջազգային համագործակցությունները նպաստում են մասնաճյուղի գիտական ճանաչման բարձրացմանը և նոր փորձի փոխանակմանը, որը թե՛ միջնաժամկետ, թե՛ երկարաժամկետ հեռանկարում կհանդիսանա համալսարանի համար նոր հնարավորությունների աղբյուր: Հաշվետու ժամանակահատվածում մասնաճյուղի դասախոսական կազմի ներկայացուցիչները մասնակցել են տարբեր միջազգային գիտաժողովների, սեմինարների, ներգրավվել են արտասահմանյան համալսարանների հետ փոխանակման ծրագրերի: Մասնավորապես.

1. մեկ դասախոս ԷՐԱԶՄՈՒՍ+ ծրագրի շրջանակներում գործուղվել է Սլովակիայի Բրատիսլավա քաղաք՝ Բրատիսլավայի տնտեսագիտության և բիզնեսի համալսարանում դասախոսություն կարդալու նպատակով,
2. մեկ դասախոս ԷՐԱԶՄՈՒՍ+ ծրագրի շրջանակներում գործուղվել է Սլովակիայի Պրեշով քաղաք՝ Պրեշովի համալսարանում դասախոսություն կարդալու նպատակով,

3. մեկ դասախոս որպես մրցութային նախագծերի հեղինակ և դիպլոմակիր մասնակցել է Բուլղարիայում կայացած Սուրբ Կիրիլ և Մեֆոդիի անվան Միջազգային գրողների միության կողմից կազմակերպված «Славянский завет» միջազգային գրական փառատոնին,
4. մեկ դասախոս որպես խոսնակ մասնակցել է Բուլղարիայում կայացած Սուրբ Կիրիլ և Մեֆոդիի անվան Միջազգային գրողների միության կողմից կազմակերպված «Славянский завет» միջազգային գրական փառատոնին։

Հաշվետու ժամանակահատվածում Մասնաճյուղի դասախոսներն ակտիվ են եղել նաև սպորտի ոլորտում կազմակերպվող միջազգային մրցաշարերում.

1. մեկ դասախոս որպես Հայաստանի բադմինթոնի պատանեկան հավաքական թիմի գլխավոր մարզիչ մասնակցել է Բուլղարիայի Պազարջիկ քաղաքում կայացած միջազգային մրցաշարին,
2. մեկ դասախոս որպես Հայաստանի բադմինթոնի պատանեկան հավաքական թիմի գլխավոր մարզիչ մասնակցել է Իտալիայի Բոլցանո քաղաքում կայացած միջազգային մրցաշարին,
3. մեկ դասախոս մասնակցելէ Կրասնոդար քաղաքում կայացած «Կյոկուշինկայ» մարզչական սեմինարին:

Մասնաճյուղի միջազգայնացման գործընթացն ակտիվացնելու, միջազգային վարկանիշային հաղեսներում հանդես գալու, մասնաճյուղի հեղինակության և միջազգային տեսանելիության բարձրացման համար անհրաժեշտ է.

1. մասնաճյուղում առանձնահատուկ ուշադրություն դարձնել դասախոսների գիտական գործունեության աջակցման, խթանման և խրախուսման ձևերի բազմազանեցմանը,
2. ընդլայնել միջազգային համագործակցության շրջանակը՝ գիտական փորձի փոխանակման և գիտական հմտությունների զարգացման գործընթացում ներգրավելով արտասահմանյան բուհերի լավագույն մասնագետների,
3. մասնաճյուղում կազմակերպել միջազգային և հանրապետական գիտաժողովներ,
4. արտասահմանյան համագործակցող բուհերի հետ իրականացնել կրթական ծրագրեր, հետազոտական աշխատանքներ,
5. կազմակերպել գիտահետազոտական կարողությունների զարգացմանն ուղղված որակավորման բարձրացման հատուկ դասընթացներ և այլն։

Այս քայլերը կօգնեն ԵՊՀ Իջևանի մասնաճյուղին ամրապնդել իր գիտահետազոտական դիրքերը, նպաստել Տավուշի մարզի և Հայաստանի կրթական ոլորտի զարգացմանը՝ շարունակելով իր կարևոր դերը գիտակրթական առաջընթացում

Իսկ ընդհանուր առմամբ Մասնաճյուղի 8 ամբիոններց 6-ը ունեն գիտական աստիճանով տեղացի կադրերի պակաս, ինչն էլ անդրադառնում է գիտական գործունեության ակտիվության ցուցանիշների վրա։

5.Համագործակցություններ

Մասնաճյուղը կարևորում է տեղական և միջազգային մակարդակներում գործընկերներ բուհերի և ոլորտային կազմակերպությունների հետ համագործակցությունը և շարունակում է ընդլայնել իր միջազգային գործընկերային ցանցը:

Հաշվետու ժամանակահատվածում Մասնաճյուղը ստորագրել է 3 միջազգային և 2 հանրապետական համագործակցության կարևոր նշանակության հուշագրեր:

Մասնաճյուղը միջազգային համագործակցության հուշագիր է ստորագրել.

1. **Ղազախստանի Գումիլյովի անվան եվրասիական ազգային համալսարանի (ԵԱՀ-ի) հետ (**2025թ.-ի ապրիլ): Այն 5-ամյա հուշագիր է, որը նախատեսում է իրականացնել դասախոսների, ասպիրանտների և ուսանողների փոխանակում (ազատելով ուսման վարձից), երկաստիճան համատեղ կրթական ծրագրեր (բակալավրիատ, մագիստրատուրա), համատեղ գիտահետազոտական նախագծեր (համաղեկավարումով), հրապարակումներ միջազգային առաջատար շտեմարաններում (Scopus, Web of Science և այլն), կողմերի աշխատակիցների վերապատրաստումներ, կողմերի ընթացիկ գործունեության վերաբերյալ տեղեկատվության փոխանակում և այլն:

2. Բուլղարիայի Շումենի Կոնստանտին Պրեսլավսկու անվան համալսարանի հետ (2025թ. սեպտեմբեր, 3 տարով): Սույն նախատեսում է դասախոսների ու ուսանողների փոխանակում, համատեղ հետազոտական և կրթական ծրագրեր, փորձագիտական խմբերի փոխանակում, համատեղ դասընթացների ու ուսումնամեթոդական նյութերի մշակում և հրապարակում:

3. Ռուսաստանի առաջին նախագահ Բ.Ն.Ելցինի անվան Ուրալի դաշնային համալսարանի հետ (2025թ. ապրիլ): Կողմերը պայմանավորվել են համագործակցել գիտակրթական և մշակութային գործունեության ոլորտներում, իրականացնել պատվիրակությունների փոխանակումներ՝ բազմամշակութային կրթական միջավայրի ժամանակակից միտումները և ավանդույթներն ուսումնասիրելու նպատակով: Այս համագործակցության շրջանակներում Մասնաճյուղի ներկայացուցիչ Ս.Մ.Մինասյանը ներգրավվել է 2025թ. ապրիլի 18-ին Ռուսաստանի Ուրալի դաշնային համալսարանում կայանալիք «Օտար լեզուն մասնագիտական հաղորդակցությունում իրական և վիրտուալ միջավայրում» XXVIII միջազգային գիտագործնական կոնֆերանսի ծրագրային կոմիտեի նախագահի տեղակալի աշխատանքներում:

4. «ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի հետ (2025թ. նոյեմբեր): Համագործակցության նպատակն է իրականացնել համատեղ գիտահետազոտական ծրագրեր, անցկացնել միջազգային և հանրապետական գիտաժողովներ, զարգացնել ուսումնամեթոդական և գիտական գրականությունը, աջակցել ասպիրանտների գիտահետազոտական աշխատանքներին, հրապարակել ԵՊՀ ԻՄ գիտական արդյունքները իստիտուտի պարբերականներում, խթանել Մերձավոր և Միջին Արևելքի ուղղությամբ իրականացվող հետազոտությունները:

5. «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի հետ (2025թ. հուլիս). կողմերը պայմանավորվել են կազմակերպել արվեստի, մշակութային ու գեղարվեստական տարբեր ոլորտների համատեղ ուսումնասիրություններ, իրականացնել հետազոտական, դասախոսական, արվեստագետների և վարչական անձնակազմի փոխանակումներ՝ գիտական և գեղարվեստական նվաճումները փոխադարձաբար կիսելու նպատակով, համատեղ նախագծել և կազմակերպել նկարիչների, արվեստագետների ցուցահանդեսներ և աշխատանքների ներկայացումներ, անցկացնել երկու կողմերին հետաքրքրող թեմաների վերաբերյալ փոխադարձ կարճաժամկետ

վերապատրաստման դասընթացներ և աշխատարաններ, կազմակերպել գիտական դասախոսություններ, հանդիպումներ, սիմպոզիումներ և համատեղ գիտաժողովներ, ապահովել գրադարաններում առկա գրականության, գիտական աղբյուրների, պարբերականների երկուստեք հասանելիություն և այլն:

Այս օտարերկրյա գիտակրթական հաստատությունների հետ համագործակցության շրջանակներում հնարավոր է դառնում ապահովել դասախոսների և ուսանողների վիրտուալ շարժությունը, զարգացնել գիտամանկավարժական կազմի կարողությունները և հեռանկարում իրագործել մասնաճյուղի տեսլականը՝ լինել միջազգային ճանաչում ունեցող, ուսանողակենտրոն բարձրագույն ուսումնական հաստատություն:

Կնքվել են նաև տարածաշրջանային նշանակության մի շարք պայմանագրեր: Մասնաճյուղը համագործակցության պայմանագիր է կնքել.

1. «Հայ-ֆրանսիական բարեկամություն և փոխանակում» միության հետ (2025թ. նոյեմբեր), համաձայն որի միությունը շարունակելու է կրթաթոշակ տրամադրել «Ֆրանսերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի ուսանողներին և աջակցելու է ֆրանսերեն լեզվի ուսուցմանը:
2. Իջևան համայնքի հետ (2025թ. մարտ), որով կողմերը պայմանավորվել են համագործակցել հետևյալ ուղղություններով՝ տարբեր դրամաշնորհային մրցույթների շրջանակներում համատեղ ծրագրերի ներկայացում և իրականացում, արդի թեմաների շուրջ կլոր սեղանների, հանդիպումների և տարբեր տեսակի միջոցառումների կազմակերպում, երիտասարդ կամավորական ներուժի օգտագործում: Նշենք, որ այս համագործակցության շրջանակում Իջևանի համայնքապետարանի հետ միասին ներկայացրել ենք ծրագրային առաջարկ GIZ-ի հայաստանյան գրասենյակի կողմից իրականացվող «Վերականգնվող էներգիա և էներգաարդյունավետություն» ծրագրի շրջանակում: Այս ծրագիրը ի թիվս այլ միջոցառումների ենթադրում է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի վարչական և ուսումնական մասնաշենքերում արևային պանելների տեղադրում և օդափոխության համակարգերի արդիականացում: Ծրագրային հայտը ընդունվել է GIZ-ի կողմից և ընդհանուր բյուջեն կազմել է **28 970 000** ՀՀ դրամ: Այն կտրամադրվի 2026թ-ին:
3. «ԱՎՌՈՄԻԿ» ՍՊԸ-ի հետ (2025թ. մայիս), որով կողմերը պայմանավորվել են համատեղ իրականացնել կրթական տարբեր ծրագրեր, մասնավորապես, ԵՊՀ ԻՄ-ի ուսանողների համար ծրագրավորման արտալսարանային դասընթացներ կազմակերպում (վեբ-կայքերի, հավելվածների, մոդուլների, համակարգերի մշակում, վեբ-դիզայն, արտադրանքի ճարտարագիտություն), ծրագրավորման արդի թեմաների շուրջ կլոր սեղանների, քննարկումների, հանդիպումների և տարբեր տեսակի միջոցառումների կազմակերպում, երիտասարդ կամավորական ներուժի օգտագործում:
4. «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի հետ (2025թ. հունիս), որով կողմերը պայմանավորվել են համագործակցել ուսանողներին կրթաթոշակների տրամադրման գործում, ջանքեր ներդնել կրթաթոշակների տրամադրման ծրագիրը հաջողությամբ իրականացնելու, ընդլայնելու, ծրագրի տարածմանն ու հանրաճանաչությանը նպաստելու համար:

Մասնաճյուղն իր համագործակցային գործունեությունն ընդլայնում է նաև դասախոսների և ուսանողների փոխադարձ այցելությունների, դասախոսությունների և հանդիպումների միջոցով:

Հաշվետու ժամանակահատվածում համագործակցության շրջանակներում իրականացվել են 9 այցելություններ և հանդիպումներ, կարդացվել են 5 դասախոսություններ, կազմակերպվել է մեկ աշնանային դպրոց: Մասնավորապես.

1. 2025թ.-ի փետրվարին ԵՊՀ ԻՄ-ի հրավերով մասնաճյուղում հյուրընկալվել է Ճապոնիայի Կիոտո Սանգյո համալսարանի օտար լեզուների ֆակուլտետի եվրոպական լեզուների դեպարտամենտի ղեկավար, պրոֆեսոր Կիտաջո Միտսուչին: Հրավիրյալ պրոֆեսորի այցի նպատակն էր ծանոթացնել Ճապոնիայի կրթական համակարգի առանձնահատկություններին, ծանոթանալ ԵՊՀ ԻՄ-ում իրականացվող «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրին, մասնակցել դասապրոցեսին: Պրոֆեսորը մասնաճյուղում անց է կացրել «Современный русский язык сегодня» և «Простое предложение. Стереотипы. Клише» թեմաներով դասախոսություններ:

2. Մասնաճյուղ են այցելել Սմոլենսկի պետական համալսարանի գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Իրինա Ռոմանովան և նույն ամբիոնի պրոֆեսոր Լարիսա Պավլովան: Այցելության նպատակը ԵՊՀ ԻՄ հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրի ուսանողների համար «Հայկական տեքստը ռուսական գրականության մեջ» թեմայով դասախոսություն իրականացնելն էր:

3. 2025թ.-ի մարտին ԵՊՀ ԻՄ հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրի առաջին կուրսի ուսանողների հետ առցանց և առկա ձևաչափով անց է կացվել բինար դասախոսություն՝ «Дидактика: от прошлого до современности» թեմայով: ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում «Հրավիրյալ պրոֆեսոր» նախագծի շրջանակներում տարբեր բուհերի հետ պարբերաբար անց են կացվում նման ոչ ավանդական պարապմունքներ:

4. 2025թ. ապրիլին մասնաճյուղ է այցելել Ֆրանսիայի հայկական հիմնադրամի խորհրդի անդամ, Տավուշի Պ.Տէվէճեանի անվան տարածաշրջանային քոլեջի հիմնադիր անդամ, Տավուշում ագրոտուրիզմի զարգացման ծրագրի ղեկավար ֆրանսահայ Ժակ Բահրին (Պահրի) և հանդիպել է «Օտար լեզու և գրականություն» մասնագիտության («ՖԼԳ», «ԱԼԳ» կրթական ծրագրերի) ուսանողների և դասախոսների հետ:

5. 2025թ. սեպտեմբերին մասնաճյուղ են այցելել Կրասնոյարսկի երկրամասի փոխնահանգապետ Վ.Վ.Սեմյոնովը, «Սիբիրյան դաշնային համալսարան» բարձրագույն կրթության դաշնային պետական ինքնավար ուսումնական հաստատության առաջադեմ նախագծերի գծով պրոռեկտոր Ս.Վ.Վերխովեցը և պատվիրակության այլ անդամներ:

6. 2025թ. սեպտեմբերին Տավուշի մարզ աշխատանքային այցի շրջանակներում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ է այցելել ՀՀ-ում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Օլիվիե Դըկոտինյիի գլխավորած պատվիրակությունը:

7. 2025թ. հոկտեմբերին ԵՊՀ ԻՄ հոգեբանական, ուսումնախորհրդատվական նորաստեղծ կենտրոնում տեղի է ունեցել «MeaningfulWorld»-ի կողմից կազմակերպված տեղեկատվական հանդիպում, որին մասնակցում էին Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Հոգեբանություն» և այլ մասնագիտությունների ուսանողներ: Հանդիպումը վարել են «MeaningfulWorld» (Association for Trauma Outreach and Prevention - ATOP) կազմակերպության հիմնադիր, Ամերիկյան հոգեբանական ասոցիացիայի «Տարվա լավագույն հոգեբան» մրցանակակիր դոկտոր **Անի**

Գալայճեանը և Հայկական վարքային գիտությունների ասոցիացիայի համահիմնադիր դոկտոր **Հարուլտ Դաքուշեանը**:

8. 2025թ. հոկտեմբերին մասնաճյուղ են այցելել Ռուսաստանի ժողովուրդների բարեկամության համալսարանի (ՌԺԲՀ) և Հայաստանում Ռոսսոտրուդնիչեստվոյի ներկայացուցիչները՝ Գիտության և մշակույթի ռուսական կենտրոնի Գյումրու մասնաճյուղի ղեկավար Անտոն Բերյանևի գլխավորությամբ: Մասնաճյուղի «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրի ուսանողների, բուհում և մարզի դպրոցներում ռուսաց լեզու դասավանդող դասախոսների և ուսուցիչների համար իրականացվել է դասախոսություն-քննարկում կրթական, գիտական, մշակութային ոլորտներում հայ-ռուսական համագործակցությանը վերաբերող հարցերի շուրջ:

9. 2025թ. նոյեմբերին մասնաճյուղում «Ռուսական գիտության նվաճումները XXI դարում» թեմայով դասախոսություն է կարդացել Սերգեյ Պոդկովալնիկովը, ով միջազգային լրատվամիջոցների խոսնակ է, փորձագետ, «Զնանիե» ռուսական միության դասախոս, գիտության մասսայականացնող և «Գիտությանը հավատարմության համար» մեդիա մրցանակի դափնեկիր:

2025թ. սեպտեմբերի 18-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում հանդիսավոր կերպով բացվել է «Հետազոտելով տեղի ժառանգությունը» թեմայով **միջազգային աշնանային երկրորդ դպրոցը**: Այն կազմակերպվել է Զալցբուրգի համալսարանի (Ավստրիա), ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ու ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի միջև համագործակցության շրջանակներում «Հայ մշակութային ժառանգության միջգիտակարգային ուսումնասիրություններ» հեռավար լաբորատորիայի կողմից: Աշնանային դպրոցին մասնակցել են Զալցբուրգի համալսարանի 5 և ԵՊՀ իջևանի մասնաճյուղի 10 ուսանողներ: Բացման խոսքովհանդեսէ եկել նաև Զալցբուրգի համալսարանի քրիստոնյա Արևելքի հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, հայագիտության բաժնի վարիչ, դոկտոր, պրոֆեսոր Յասմին Դում-Թրագուտը:

Մասնաճյուղը 2025թ.-ից համագործակցում է «Միկրոչիպ» ընկերության հետ, այդ համագործակցության շրջանակներում ձեռք են բերվել անհրաժեշտ սարքեր և գործիքներ, կատարվել են պայմանների և սարքերի որոշակի տեղակայման աշխատանքներ: 2025թ.-ի սեպտեմբերից ձեռք բերված համատեղ համաձայնությամբ Microchep ընկերության աշխատակից Էրիկ Ասատրյանը հրավիրվել է մասնաճյուղ՝ 4-րդ կուրսի ուսանողներին դասավանդելու «Տեխնիկական համակարգերի ավտոմատացված կառավարման հիմունքներ» առարկան: Քննարկվում է առաջիկայում ֆակուլտետի աշխատակցի գործուղել Microchep ընկերություն՝ մասնագիտական վերապատրաստման, ինչպես նաև ձեռք բերել համաձայնություն ընկերությունում ուսանողների պրակտիկան կազմակերպելու համար: ԵՊՀ ԻՄ-ի և մարզի SS ոլորտը ներկայացնող ընկերությունների ներկայացուցիչները քննարկել են կրթական պրոցեսում աշխատաշուկայի առավել ակտիվ ներգրավման և շրջանավարտների աշխատատեղերի ձևավորման և իրականցման հարցեր:

2025թ. դեկտեմբերին կայացել է հանդիպում ՀՀ Ինժեներական Ասոցիացիայի նախագահ Արամ Սալաթյանի հետ, քննարկված հարցերն ընդգրկել են Ասոցիացիայի կազմում գտնվող ընկերություններին ներկայացնել ԵՊՀ ԻՄ-ն և ստեղծել փոխադարձ հարմար հարթակ հետագա համագործացկության ասպարեզում:

Հաշվետու տարվա կարևոր ձեքբերումներից է Մասնաճյուղի համագործակցությունը մարզի **«Տավուշ» ՀԸ-ի հետ,**որի շրջանակում ստեղծվել է «Տավուշյան հորիզոններ» հաղորդաշարը: Այդ հաղորդաշարում ԵՊՀ ԻՄ դասախոսների հետ անցկացվում են զրույցներ,քննարկումներ տարբեր թեմաների շուրջ:

2025թ.-ի սկզբին ԵՊՀ ԻՄ նախաձեռնությամբ և «Տավուշ» ՀԸ-ի հետ համագործակցությամբ մեկնարկել է «Տավուշյան հորիզոններ» հաղորդաշարը, որի նպատակն է ներկայացնել ԵՊՀ ԻՄ պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական ներուժը և բարձրացնել տարածաշրջանային, գիտական, տեխնիկական և սոցիալ–մշակութային թեմաների հանրայնացման մակարդակը:

2025թ.-ի հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են 5 հաղորդում-հանդիպումներ մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, քննարկվել են մարզում ռոբոտաշինության զարգացման հնարավորությունների մասին (տեխն.գ.թ., դոցենտ Ռ.Յոլչյան), Հայաստանի խորհրդայնացման շրջանում Իջևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների մասին (պ.գ.թ., դոցենտ Ա.Ազատյան), խորհրդային և անկախության շրջանում Իջևանի փողոցների անվանադրության և անվանափոխության մասին (դասախոս Վ.Պողոսյան), մարզում հոգեբանական խորհրդատվությունների իրականացման և դրանց մոտեցումների մասին (հոգեբ.գ.թ., դոցենտ Լ.Պետրոսյան) և մասնաճյուղի դիմորդների համար առանձնապես կարևորություն ունեցող մասնագիտական ընտրության հոգեբանական խնդիրների մասին (հոգեբ.գ.դ., պրոֆեսոր Ռ.Աղուզումցյան) հարցեր: Պետք է նշել, որ յուրաքանչյուր հաղորդումը միջինում ոնեցել է 4500 և ավելի դիտումներ և հաշվետու ժամանակահատվածում հաղորդաշարի ընդհանուր դիտումների քանակը կազմում է 19,400 դիտում:

Նկարահանվել է ևս 2 հաղորդում, որոնք ներկայումս գտնվում են մոնտաժման փուլում և կհրապարակվեն առաջիկա ընթացքում: Հաղորդաշարի շրջանակում նախատեսվում է նկարահանել ևս 8 թողարկում, որոնք կնպաստեն ծրագրի նպատակների առավել ամբողջական իրագործմանը:

2025թ. հունվարին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը Հայաստանի, Ղրղզստանի, Սլովենիայի, Գերմանիայի և Վրաստանի մի շարք բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ համագործակցությամբ ERASMUS Lump Sum Grant («Էրազմուս Լամփ Սամ Գրանտ») ծրագրի շրջանակներում մշակել և ներկայացրել են **DIGITECH** («Դիջիթեք») նախագիծը: Նախագծի գլխավոր նպատակն է բարձրագույն կրթության ոլորտում կարողությունների զարգացումը, նորարարական տեխնոլոգիաների ներդրումը տեխնոլոգիական գործընթացների և արտադրության թվայնացման մեջ: Այն համապատասխանում է թվային փոխակերպման, կանաչ տեխնոլոգիաների և բաց մուտքի վերաբերյալ ԵՄ քաղաքականությանը՝ ապահովելով երկարաժամկետ ազդեցություն և կայունություն: DIGITECH ծրագրի տևողությունը 3 տարի է, ԵՊՀ ԻՄ-ի համար նախատեսված գումարը 84.945 եվրո է:

DIGITECH նախագիծը միտված է լուծելու կրթական արդյունքների և աշխատաշուկայի պահանջարկների միջև անհամապատասխանությունը Ղրղզստանում, Հայաստանում և Վրաստանում՝ տեխնոլոգիական գործընթացների և արտադրության ավտոմատացման գործող ուսումնական ծրագրերում ներդնելով նորարարական տեխնոլոգիաներ («Մեծ տվյալներ»,

մեքենայական ուսուցում և արհեստական բանականություն)։ Նախագիծն ուղղված է կրթության որակի, շրջանավարտների զբաղվածության մակարդակի բարձրացմանը՝ նրանց զինելով տեխնոլոգիական գործընթացների թվայնացման և արտադրության ոլորտում առաջադեմ հմտություններով, միաժամանակ արդիականացնելով ուսուցման մեթոդաբանությունները, խթանելով ակադեմիական աշխարհի և արդյունաբերության միջև ավելի սերտ համագործակցությունը։

Ծրագիրն ընդգրկում է բակալավրի կրթական ծրագրերի թարմացում, շարունակական մասնագիտական զարգացման դասընթացների մշակում և «Թվային երկվորյակներ» տեխնոլոգիական լաբորատորիաների ստեղծում մասնակից բուհերում։ Նախագծում կարևոր դեր է հատկացված ներառականությանը՝ նպատակ ունենալով հավասար հնարավորություններ ստեղծելու կանանց, անապահով խմբերի և հեռավոր շրջանների ուսանողների համար։

Եվրոպական համալսարանների և ոլորտի առաջատարների հետ համագործակցության միջոցով նախագիծը կներդնի լավագույն փորձը, կբարելավի դասավանդողների վերապատրաստումը և կխթանի կայուն տնտեսական զարգացումը։ Միջազգային համագործակցության և գիտելիքների փոխանցման միջոցով այն կստեղծի ամուր կրթական հարթակ՝ նպաստելով մասնակից երկրների տնտեսական և տեխնոլոգիական առաջընթացին։

6. Ենթակառուցվածքներ, պայմաններ, ռեսուրսներ

2025թ.-ը մասնաճյուղի պատմության մեջ ամենալայնածավալ և հավակնոտ ծրագրերի իրականացման, ենթակառուցվածքների արդիականացման, վերանորոգման և հիմնանորոգման աշխատանքների տարի է։ Եվ կարելի է փաստել, որ Մայր բուհի 100 մլն. դրամ ֆինանսական և հոգեբանական աջակցության արդյունքում մասնաճյուղը լուծում է երկար ժամանակ չհաղթահարվող խնդիրները և հասել է հանգուցալուծման։

1. Այդ խնդիրների շարքում երկար ժամանակ **առաջնահերթ է** եղել մասնաշենքերից մեկի տանիքի վերանորոգման խնդիրը։ Նշենք, որ մասնաշենքի տանիքը հանդիսանում է 2 բազմաբնակարան շենքերի բակ։ Այն ստեղծման օրվանից չէր վերանորոգվել և լսարաններում պարբերաբար ջուր էր հոսում։ 2025թ.-ին այդ խնդիրը հիմնովին լուծվել է։ Այս ծրագրի իրականացման համարմասնաճյուղից տրամադրվել է շուրջ 21 մլն. դրամ,կառավարությունից տրվել է 61 մլն. դրամ, իսկ համայնքապետարանից՝ 8 մլն դրամ։ Այդ աշխատանքների արդյունքում վնասվել էր ամբողջ մասնաշենքի առաստաղը։ Ննական գիտությունների ֆակուլտետի 2-րդ հարկի միջանցքի առաստաղը վերանորոգվել է, սակայն պլանավորվել է հիմնովին վերանորոգել ֆակուլտետի բոլոր լսարանները, ստեղծել օդափոխության համակարգ և այլն։

2. Գրեթե ավարտման փուլում է մասնաճյուղի կենտրոնական մասնաշենքի բակի ձևափոխման և հիմնանորոգման աշխատանքները։

3. Մասնաճյուղում ներդրվել է անվտանգության համակարգ՝ ամբողջ տարածքը վերահսկելու համար, Ուսանողական 3 հասցեում տեղադրվել է տեսաձայնագրման համակարգ , տեղադրվել է հակահրդեհային նոր համակարգ,անց է կացվել հակահրդեհային ցանցի ջրագիծ, ձեռք են բերվել հակահրդեհային սարքեր։

4. Հաշվետու ժամանակահատվածում Մասնաճյուղի **հաջորդ** կարևորագույն ձեռքբերումը դա կիրառական արվեստի ֆակուլտետում բացված **աշխատարանն** է։ Մասնաճյուղի տնօրենության և

ԵՊՀ աջակցությամբ հաշվետու ժամանակահատվածում հնարավոր եղավ ստեղծել **«ԵՊՀ արվեստանոց»** աշխատարանը, որը շրջանավարտներին և ուսանողներին հնարավորություն է տալիս ստեղծված հարմարավետ արվեստանոցներում զբաղվել արվեստի տարբեր ճյուղերով, աշխատել մանրանկարչության, խեցեգործության և տեքստիլ ոլորտներում՝ ստեղծելով բազմաթիվ արժեքավոր նմուշներ: Պլանավորված է և արդեն իսկ իրականացվում է այն գործընթացը, որ հաջողված աշխատանքները կներկայացվեն էքսպոներում, տարբեր ցուցադրություններում, կկազմակերպվի դրանց վաճառք, կնվիրաբերվեն բարեկամ կազմակերպությունների և անհատների: Աշխատարանի մասնակիցների հետ կնքվել են համապատասխան պայմանագրեր և հատկացվել արտահամալսարանական անվանական կրթաթոշակներ: Հաշվետու ժամանակահատվածում «ԵՊՀ արվեստանոց» աշխատարանը ունեցել է 20 անդամ:

Աշխատարանի գործունեության շրջանակներում հանդիպումներ են եղել մարզի չորս խոշորացված համայնքների ղեկավարների հետ և ձեռք են բերվել համաձայնություններ՝ ԵՊՀ արվեստանոցի հետ համագործակցության, անհրաժեշտ նվերների պատրաստման և վաճառքի մանրամասների հետ կապված:

5. Կիրառական արվեստի ֆակուլտետում ուսանողների և դասախոսների ուսումնական և մասնագիտական աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու և ապահովելու համար թարմացվել է արվեստանոցների գույքը, ձեռք են բերվել անհրաժեշտ քանակի նոր նկարակալներ, դասընթացների իրականացման համար անհրաժեշտ նյութեր և պարագաներ, անհրաժեշտ գրականություն:

Հաշվետու ժամանակահատվածում մեծաքանակ գույք և տեխնիկա է ֆակուլտետը ստացել «ԵՊՀ արվեստանոց» աշխատարանի շրջանակներում: Արվեստանոցի ողջ կահույքը նոր է ձեռք բերվել, փոխվել է լուսավորության համակարգը: Ձեռք է բերվել խեցեգործական նոր վառարան՝ անհրաժեշտ էլեկտրական գործիքներով, խեցեգործության, մանրանկարչության և ապակենկարչության համար ձեռք է բերվել անհրաժեշտ մեծաքանակ գույք՝ ներկող, հղկող, փչող գործիքներ, խառնիչներ, տարաներ, բոլորակներ, անհրաժեշտ նյութեր և ներկեր, տեքստիլ ուղղվածության համար ձեռք են բերվել կարի մեքենաներ, արդուկներ, շրջանակներ և ենթաշրջանակներ, տարբեր կտորներ և թելեր:

6. Բնական գիտությունների և կիրառական արվեստի ֆակուլտետների համակարգչային սրահները համալրվել են 20 հատ համակարգիչներով: ԵՊՀ-ից նվեր ենք ստացել 5 հատ խելացի գրատախտակ, որոնցից 1-ական տեղադրվել են Հումանիտար գիտությունների և Տնտեսագիտության, 3-ը՝ Բնական գիտությունների ֆակուլտետների լսարաններում, ինչի արդյունքում զգալի բարձրացել է դասընթացների կազմակերպման և վարման արդյունավետությունը: Էռազմուս միջազգային ծրագրի շրջանակում բնագիտական ֆակուլտետի լաբորատորիաների տեխնիկական վերազինման համար պատվիրվել է շուրջ 10 մլն. դրամի ուսումնական գույք և սարքավորումներ, այդ թվում 3 խելացի գրատախտակ:

7. Այժմ ներկայացնենք մասնաճյուղի համար **հաջորդ կարևոր ձեռքբերումը**: 2025թ.-ի հոկտեմբերին մասնաճյուղում պաշտոնապես բացվել է **ԵՊՀ ԻՄ հոգեբանական, ուսումնախորհրդատվական կենտրոնը՝** նպատակ ունենալով Տավուշի մարզում զարգացնել հոգեբանական խորհրդատվության, ուսումնական ծրագրերի, համայնքային աջակցման և

կիրառական հետազոտությունների որակը: Կենտրոնը վճարովի և անվճար ծառայություններ է մատուցում ինչպես ուսանողներին, այնպես էլ համայնքի բնակիչներին և գործընկեր կառույցներին:

2025թ.-ի հոկտեմբերից դեկտեմբեր կարճ ժամանակահատվածում կենտրոնն ակտիվ գործունեություն է ծավալել և իրականացրել է ուսուցողական, խորհրդատվական, մեթոդական և մեդիա գործունեություն՝ ձևավորելով այն որպես Տավուշի մարզում հոգեբանական աջակցության և մասնագիտական զարգացման կարևոր հարթակ:

Կենտրոնի հոգեթերապևտները այցելուներին տրամադրում են նախնական խորհրդատվական հանդիպումներ և անհրաժեշտ ուղղորդումներ:

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնում իրականացվել է 3 անվճար և 1 վճարովի դասընթաց, որոնց մասնակցել է մարզի 46 բնակիչ, այդ թվում 4-ը՝ «Տահույս» ՀԿ աշխատակիցներ.

1. «Հոգեբանական խորհրդատվության մոտեցումները» (դասընթացավար՝ դոց. Լաուրա Պետրոսյան),
2. «Անձի ստեղծարար ներուժի զարգացում» (դասընթացավար՝ դոց. Սոնա Պողոսյան),
3. «Արտթերապիայի հիմնադրույթներ և կիրառական մոտեցումներ» (դասընթացավար՝ հոգեբ. գիտ. թեկն. Անի Ավագյան),
4. «Հոգեբանական անհատական խորհրդատվության հմտություններ» (դասընթացավար՝ դոց. Լաուրա Պետրոսյան):

Կենտրոնն իրականացնում է նաև ուսումնասիրական և մեթոդական աշխատանքներ: Կենտրոնում ուսանողությանն է ներկայացվել «Մասնագիտական կողմնորոշման ուղեցույցը», որը մշակել են ԵՊՀ ԻՄ հոգեբանության 4-րդ կուրսի ուսանողները, որի մշակման շրջանակներում Տավուշի մարզի դպրոցներում իրականացվել է ուսումնասիրություն՝ 150 աշակերտի ներգրավմամբ:

Հաշվետու շրջանում կենտրոն են դիմել 7 անձ: Նրանց կենտրոնի հոգեթերապևտները տրամադրել են անհատական հոգեբանական խորհրդատվություն և անհրաժեշտ ուղղորդումներ:

Կենտրոնը ներկայացված է նաև սոցիալական հարթակներում: Ընդամենը գործունեության երկու ամսում կենտրոնը Facebook էջում կատարել է 24 հրապարակում, Instagram էջում՝ 29: Եվ պետք է փաստել, որ մեդիա հարթակներում ներկայացվածությունը նպաստել է կենտրոնի տեսանելիության և դիմելիության աճին: Այն Տավուշի մարզում հոգեբանական աջակցության և մասնագիտական զարգացման կարևոր հարթակ է:

Այս ամենին զուգահեռ պետք է նշել նաև մի շարք ակնհայտ խնդիրներ, որոնք առկա են հիմնականում հումանիտար գիտությունների և տնտեսագիտության ֆակուլտետներում: Երկու ֆակուլտետներն ունեն լսարանային ֆոնդի խնդիր, որն ընդգծված ի հայտ է գալիս հեռակա ուսուցման գործընթացն սկսելու հետ: Ժամանակակից մարտահրավերներին ընդառաջ ֆակուլտետներն առաջարկում են ավելացնել պրոյեկտորով լսարանների քանակը:

Մասնաճյուղի ղեկավարության հատուկ ուշադրության կենտրոնում է գրադարանն իր գրքային ֆոնդով և էլեկտրոնային գրադարանով: Մասնաճյուղն իր ուսանողների և դասախոսների ուսումնական, հետազոտական և գիտական ակտիվ գործունեության ապահովման համար ձգտում է ունենալ արդիականացված գրադարանային ծառություն, համալրված և թվայնացված մասնագիտական գրականություն, մասնաճյուղին և հանրությանը ծառայող մեծաքանակ գրականությամբ էլեկտրոնային գրադարան, որակյալ սպասարկում և այլն: Գրադարանային

ծառայության արդիականացմանը և զարգացմանը մեծապես նպաստում է գրականության թվայնացման «KOHA» համակարգ։

2025թ.-ի դեկտեմբերի 9-ի դրությամբ գրադարանում առկա գրականության **91** տոկոսը կամ **19920** միավոր գիրք, դասագիրք և«KOHA» համակարգում ամսագիր, Ամերիկյան ընթերցասրահի **1257** միավոր գիրք և ամսագիր հասանելի է ։ Հաշվետու ժամանակահատվածում համակարգ է մուտքագրվել շուրջ 2853 միավոր գրականություն։ Առանձնահատուկ պետք է նշել ԵՊՀ գրադարանի աջակցության մասին. նրա աշխատակիցների աջակցությամբ իրականացվել է ԵՊՀ առցանց քարտարանում բացակայող նոր **876** անուն գրքի և գիտական ամսագրի մուտքագրում։ Ընդհանուր առմամբ ԵՊՀ գրադարանը մասնաճյուղի համար մուտքագրել է **3890** անուն նոր գիրք։

Նշենք, որ Մասնաճյուղի էլեկտրոնային գրադարանի կայքում առկա է ավելի քան **1163** էլեկտրոնային գիրք և դասագիրք, հաշվետու ժամանակահատտվածում էլեկտրոնային գրադարանը համալրվել է 17 գիրք-դասագրքերով։

ԵՊՀ ԻՄ տարածքից հասանելի են ԵՊՀ գրադարանի կողմից մուտք ապահովվող բազմաթիվ գիտաչափական շտեմարաններ։ Մեկ անգամ կազմակերպվել է սեմինար քննարկում Հայ գիրք և Հայ մամուլ շտեմարանների պաշարների դասախոսական համակազմին ծանոթացնելու նպատակով։ Գրադարանի աշխատակազմը պարբերաբար մասնակից է ԵՊՀ Իզմիրլյանների անվան գրադարանի և Հայաստանի ազգային գրադարանի և հանրապետական ու բուհական գրադարանների կազմակերպած աշխատաժողովներին, աշխատակիցները մասնակցում են առցանց դասընթացների և աշխատաժողովների։

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել է օտարալեզու գրականության համալրման գործընթացը։ Այն համալրվել է նվիրատվությունների և գնումների միջոցով։ Հաշվետու ժամանակահատվածում ռուսերեն լեզվով գրականությունն ավելացել է **109** միավորով, որի հիմնական մասը ռուսական համագործակցային կազմակերպությունների՝ Ռուսական կենտրոնի, ինչպես նաև անհատների նվիրատվություն է։ Անգլերեն լեզվով գրականությունն ավելացել է **148** միավորով՝ ԱՄՆ Խաղաղության կորպուսի կամավոր Թամարա Ինգլանդի կողմից կատարված նվիրատվության և գնումների միջոցով։ Ֆրանսերեն լեզվով գրականությունը ավելացել է **85** միավորով, որի նվիրատվությունն իրականացվել է Հայաստանում Ֆրանսիայի դեսպանության կողմից։

Հաշվետու ժամանակահատվածում մասնաճյուղի գրադարանը համալրվել է տնտեսագիտության և զբոսաշրջության ուղղվածության 53 գրքերով և դասագրքերով, հումանիտար ուղղվածության 367 գրքերով և դասագրքերով։

Գրադարանը հանդիսանում է ուսանողների և դասախոսների սիրելի վայրը, որտեղ իրականացվում են նաև տարբեր միջոցառումներ։ 2025 թ. հոկտեմբերի 3-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գրադարանի «Ամերիկյան» ընթերցասրահում տեղի ունեցավ ԵՊՀ ԻՄ հայոց լեզվի և գրականության ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. Սիրանուշ Հովհաննիսյանի և ԵՊՀ ընդհանուր հոգեբանության ամբիոնի դոցենտ, հ.գ.թ. Դիանա Սարգսյանի հեղինակած «Հեքիաթի հոգելեզվաբանական կիրառությունը» ուսումնական ձեռնարկի շնորհանդեսը

Ամերիկյան գրադարան և դասընթացների կենտրոնի ավելի քան **1257** միավոր գրականությունը ծառայեցվում է ուսանողների կարիքներին։ Ամերիկյան ընթերցասրահի

տարածքը ծառայում է ոչ միայն սպասարկման, այլև դասախոսությունների և համալսարանական այլ միջոցառումների հարթակ:

7.Որակի ներքին ապահովում և կրթական բարեփոխումներ

Յուրաքանչյուր բուհի բարձր հեղինակությունը և վարկանիշը ձևավորվում են նրա ստեղծած և տարածած որակյալ կրթությամբ ու գիտությամբ, հանրությանը տրամադրած արդյունավետ ծառայություններով և այլն: Հետևաբար մասնաճյուղը մշտապես բարելավում է իր կրթական գործառույթները՝ ակտիվացնելով մասնաճյուղում որակի ներքին ապահովման գործընթացները, բարեփոխելով կրթության որակն ու մակարդակը, աջակցելով իր դասախոսական կազմի մասնագիտական որակների բարձրացմանը և ուսանողների կրթական կարիքների բավարարմանը:

Մասնաճյուղում որակի ներքին ապահովման գործընթացները համակարգում և իրականացնում է Կրթական բարեփոխումների և որակի ապահովման(ԿԲՈԱ) բաժինը:

Հաշվետուն ժամանակահատվածում բաժինն իր աշխատանքային պլանի շրջանակներում իրականացրել է հետևյալ գործընթացները.

1. մշակել է մի շարք կանոնակարգող փաստաթղթեր (կարգ, կանոնակարգ, քաղաքականություն, ընթացակարգ), այդ թվում.
   - «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ֆինանսական գործունեության մշտադիտարկման և գնահատման **կարգը**,
   - «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի շրջանավարտների իրազեկման և ներգրավման **քաղաքականությունը**,
   - մասնաճյուղի բաց գիտության **քաղաքականությունը**,
   - մասնաճյուղի գործունեությանն առնչվող տեղեկատվության հրապարակման և հանրության իրազեկման **ընթացակարգը,**
2. կազմակերպել է բոլոր կրթական ծրագրերի վերանայման և հաստատման գործընթացը,
3. Ներդրվել է նախաստուգարքի գաղափարը: Այն անց է կացվում e-learning համակարգի միջոցով: Միայն թեստը հաղթահարելուց հետո է ուսանողին թույլատրվում մտնել ստուգարքի:
4. մշակել է հարցաշարեր և իրականացրել է մասնաճյուղի տարբեր գործընթացներից ներքին և արտաքին շահակիցների բավարարվածության ուսումնասիրություններ, այդ թվում.
   - մասնավոր հատվածի կարիքների ուսումնասիրության հարցման հարցաշարը,
   - «Վարչական և ուսումնաօժանդակ աշխատողների բավարարվածությունը մասնաճյուղից» առցանց հարցումը,
   - 2024-25թթ.հետազոտական աշխատանքների իրականացումից և գնահատումից 3-րդ և 4-րդ կուրսերի ուսանողների բավարարվածության հարցումը,
5. իրականացվել են մի շարք վերլուծություններ, այդ թվում.
   - ՀՀ և Տավուշի մարզի աշխատաշուկայի զարգացման միտումների, պահանջարկի վերլուծություն,
   - ԵՊՀ ԻՄ-ի՝ 2024-2025 ուստարվա առկա և հեռակա ուսուցման շրջանավարտների վերաբերյալ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կարծիքների վերլուծություն,
6. մշակվել են ծրագրեր և փաթեթներ, այդ թվում.

- ԵՊՀ ԻՄ աշխատակազմի ինքնաիրացման և ժամանցի հնարավորությունների փաթեթը,
- սոցիալապես խոցելի խմբերի և Արցախից բռնի տեղահանված ուսանողների կրթական, սոցիալական և մասնագիտական աջակցության ծրագիրը,
- ԼՂ-ից բռնի տեղահանված ուսանողների կարիքների գնահատում,

7. դասախոսական կազմի համար պլանավորվել և իրականացվել են վերապատրաստման 4 դասընթացներ,

8. համակարգվել է ուսուցիչների վերապատրաստման գործընթացը,

9. ամենակարևորը, իրականացվել է Մասնաճյուղի գործունեության արդյունքային ցուցանիշների (ԳԱՑ) համալրում և վերլուծություն:

Ուրախությամբ կարող ենք փաստել, որ մասնաճյուղն արդյունավետ կատարում է իր առջև դրած խնդիրները և հպարտությամբ ասել, որ ունենալով Մայր բուհի նման աջակից և հենարան, մասնաճյուղը կդառնա ուսումնագիտական հզոր կենտրոն՝ հավաքելով իր շուրջը մարզի ստեղծագործ ու խելացի երիտասարդությանը: